

Դատական Գործ N: ԿԴ1/0553/02/10

Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:	25-06-2010
Հայցվոր/դիմող	
Անուն	Անյա
Ազգանուն	Դանիելյանց
Հայրանուն	Պողոսի
Հասցե	ք.Աբովյան, Չափիչի 3-րդ հանրակացարան, սենյակ 52
Պատասխանող	
Անուն	Հասմիկ
Ազգանուն	Նիկողոսյան
Հայրանուն	Սարիբեկի
Հասցե	ք.Աբովյան, Չափիչի 3-րդ հանրակացարան, սենյակ 52
Ինքնուրույն պահանջ ներկայացնող:	
3-րդ անձ	
Անուն	Ալբերտ
Ազգանուն	Դանիելյանց
Հայրանուն	Առնոլդի
Հասցե	ք.Աբովյան, Չափիչի 3-րդ հանրակացարան, սենյակ 52
Պահանջ:	պայմանագիրը մասնակի անվավեր ճանաչելու, անշարժ գույքի կադաստրի գրանցամատյանում կատարած գրառումը և դրա հիման վրա տրված սեփականության իրավունքի վկայականը մասնակի փոփոխելու, բնակարանից վտարելու պահանջների մասին
Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:	2.4
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Լրացուցիչ պահանջի վիճակագրության տողի համարը:	
Ամսաթիվ:	25-06-2010
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Աբովյան
Դատավորի անուն:	Սլավիկ Անդիջանի Թորոսյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Աբովյան
Դատավորի անուն:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	25-06-2010

Ամսաթիվ:	25-06-2010
Սահմանվել է արտոնություն:	Պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգվել է
Որոշման ամսաթիվ:	25-06-2010
Դատաքննության ամսաթիվ:	03-08-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	25-06-2010
Այլ նշումներ:	03.08.2010թ.-ին հրավիրվել է նախնական դատական նիստ:
Ժամ:	10:00
Նիստերի դահլիճի համար:	3
Դատաքննության ամսաթիվ:	19-08-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	03-08-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	14:00
Նիստերի դահլիճի համար:	3
Դատաքննության ամսաթիվ:	07-10-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	19-08-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	14:00
Նիստերի դահլիճի համար:	3
Դատաքննության ամսաթիվ:	20-10-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	07-10-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համար:	3
Դատաքննության ամսաթիվ:	26-10-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	20-10-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	11:30
Նիստերի դահլիճի համար:	3
Հայցի լուծման ամսաթիվ:	10-11-2010
Հայցի լուծումը:	Մերժվել է
Հոդված	
Հոդված	<< քաղ.դատ. օր.-ի 130-132 հոդված
Հակընդդեմ հայցի լուծումը:	
Հակընդդեմ հայցի լուծման	

ամսաթիվ:

Այլ նշումներ:

Ղատական ակտ (վճիռ, որոշում):

ԿԴ 1/0553/02/10

Վ Ճ Ի Ո

ՀԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
10.11.2010թ. ք. Աբովյան

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՂԱՏԱՐԱՆԸ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ՝ դատավոր Սլավիկ Թորոսյանի,
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՄԲ՝ Սվետլանա Համբարձումյանի,

Լիլյա Քարամյանի,
մասնակցությամբ՝

ՀԱՅՅՎՈՐ՝ Անյա Պողոսի Ղանիելյանցի ,

/անձնագիր ԱՀ 0214734, տրված 21.06.2006թ.-ին 019-ի կողմից/
ՀԱՅՅՎՈՐԻ ՆԵՐՎ.՝ Մարինե Թելմանի Գրիգորյանի,

/անձնագիր ԱԵ 0433300, տրված 10.09.1999թ.-ին 019-ի կողմից/
ՊԱՏԱՍԽԱՆՈՂ՝ Հասմիկ Սարիբեկի Նիկողոսյանի,

/անձնագիր ԱՅ 0350510, տրված 043-ի կողմից 24.07.2001թ.-ին /
ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻ ՆԵՐՎ.՝ Անուշ Հակոբյանի,

/արտոնագիր թիվ 265/
ԵՐՐՈՐԴ ԱՆՁ՝ Ալբերտ Առնոլդի Ղանիելյանցի,

/անձնագիր ԱՅ 0566023, տրված 09.03.2002թ.-ին 019-ի կողմից /
ԵՐՐՈՐԴ ԱՆՁԻ ՆԵՐՎ.՝ Սիրանուշ Վալերի Հարությունյանի,

/անձնագիր ԱՑ 0312571, տրված 25.06.1998թ.-ին 018-ի կողմից/
ԵՐՐՈՐԴ ԱՆՁ՝ Կոտայքի մարզպետարանի

ներկայացուցիչներ՝ Աբրահամ Աբելի Հարությունյանի,

/անձնագիր ԱԵ 0580393, տրված 06.10.2000թ.-ին 019-ի կողմից/
Վանիկ Դերենիկի Հունանյանի,

/անձնագիր ԱԿ 0246607, տրված 18.02.2009թ.-ին 049-ի կողմից/
Ղռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ

հայցի՝ Անյա Պողոսի Ղանիելյանցի ընդդեմ Հասմիկ Սարիբեկի

Նիկողոսյանի, երրորդ անձինք՝ Ալբերտ Առնոլդի Ղանիելյանցի, ՀՀ

Կոտայքի մարզպետարանի, ՀՀ Տարածքային կառավարման

նախարարության միգրացիոն պետական ծառայության՝

պայմանագրերը մասնակի անվավեր ճանաչելու, անշարժ գույքի

կադաստրի գրանցամատյանում կատարված գրառումը և դրա

հիման վրա տրված սեփականության իրավունքի գրանցման

վկայականը մասնակի փոփոխելու, բնակարանից վտարելու

պահանջների մասին

Պ Ա Ր Զ Ե Ց

I.

1.Ղատավարական նախապատմությունը

Անյա Պողոսի Ղանիելյանցը դիմել է դատարան 25.06.2010թ.-ին,

նույն օրը հայցն ընդունվել է վարույթ և որոշում է կայացվել

նախնական դատական նիստ իրավիրելու մասին, դատարանի

25.06.2010թ.-ի որոշմամբ բավարարվել է հայցվորի

միջնորդությունը՝ պետական տուրքի վճարումը հետաձգելու

վերաբերյալ, պատասխանողի կողմից հայցադիմումի պատասխան է

ներկայացվել 03.08.2010թ.-ին, նախնական դատական նիստի

ընթացքում դատարանն իր նախաձեռնությամբ երրորդ անձինք է

ներգրավել ՀՀ Կոտայքի մարզպետարանին և ՀՀ Տարածքային

կառավարման նախարարության միգրացիոն պետական

ծառայությանը, 19.08.2010թ.-ին ՀՀ Տարածքային կառավարման

նախարարության միգրացիոն պետական ծառայության կողմից

ստացվել է հայցադիմումի պատասխան:

2. Հայցվոր Անյա Պողոսի Դանիելյանցի դիրքորոշումը

Հայցվոր Անյա Պողոսի Դանիելյանցը դիմել է դատարան և հայտնել, որ 1989 թվականի հուլիս ամսին որդու՝ Ալբերտ Դանիելյանցի հետ բռնագաղթվել են Ադրբեջանից, թողնելով այնտեղ իրենց տունն ու ամբողջ ունեցվածքը՝ ժամանակավոր բնակություն հաստատելով Աբովյան քաղաքի էներգետիկական քոլեջի հանրակացարանում: Իրեն տրվել էր նշված հանրակացարանի թիվ 406 սենյակը, իսկ տղային՝ թիվ 403 սենյակը: Երկար ժամանակ բնակվել են նշված սենյակներում, միշտ հուսալով, որ պետության կողմից կստանան աջակցություն, վերջապես կունենան իրենց բնակարանը և որոշ չափով կվերականգնեն իրենց կորցրածը:

Ադրբեջանից գաղթելուց հետո ՀՀ Կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների նախկին վարչության կողմից հաշվառվել են որպես փախստական և ՀՀ Կառավարության 2004թ. մայիսի 20-ի 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրի մասին N 747-Ն որոշմամբ հաստատված ծրագրով ընդգրկվել են բնակարանի գնման վկայագրերի տրամադրման հերթացուցակում: 1998 թ-ի դեկտեմբեր ամսին որդին ամուսնացել է պատասխանող Հասմիկ Նիկողոսյանի հետ և միասին բնակվել են վերը նշված հանրակացարանի 403 սենյակում: Պատասխանող ՀՀ քաղաքացի է և որդու հետ ծանոթացել են այստեղ՝ Հայաստանի

Հանրապետությունում, սակայն թաքցրել էր, որ այլ անձի հետ գտնվել է ամուսնության մեջ և որ ուներ մեկ երեխա: Այդ մասին իրենք իմացել են ամուսնությունից մի քանի տարի անց:

Երկար տարիներ սպասելով և հուսալով, որ պետության կողմից կստանան աջակցություն և կունենան իրենց սեփական տունը, վերջապես իրենց և ՀՀ Կառավարության, ի դեմս Կոտայքի մարզպետի, միջև կնքվեց ՀՀ 2007 թվականի Պետ.բյուջեով 1-ին քնակարանային ապահովում բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով 1-ին քնակարանային ծրագրով նախատեսված հատկացումների հաշվին անհատույց պետական ֆինանսական աջակցության տրամադրման մասին պայմանագիր, որով իրեն և որդուն, որպես աջակցություն ստացողի, անհատույց տրամադրվել է բնակարանի գնման վկայագիր, որն անվանական փաստաթուղթ է և որով հավաստվում է վկայագիր ստացած անձի կողմից ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից պատրաստի բնակարանի /բնակելի տան/ ձեռքբերման համար անհատույց պետական ֆինանսական աջակցություն ստանալու իրավունքը: Իրեն անհասկանալի պատճառով, նշված պայմանագրում ընդգրկվել է նաև Հասմիկ Նիկողոսյանը, որը ՀՀ քաղաքացի էր, հետևաբար փախստական չէր կարող համարվել և չէր կարող, որպես բնակարանի գնման վկայագրի միջոցով անհատույց պետական ֆինանսական աջակցություն ստացող համարվել:

Այսպես՝ Համաձայն 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված փախստականների համար կառուցված բնակարանները սեփականության իրավունքով փախստականներին հատկացնելու մասին 1-ին օրենքի 1-ին հոդվածով կարգավորվում է 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված փախստականների, այդ թվում՝ նրանցից Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների միջոցներով Հայաստանի

Հանրապետության տարածքում կառուցված բնակելի շենքերի բնակարանները, քրեջատիպ տները սեփականության իրավունքով փախստականներին հատկացնելու հետ կապված հարաբերությունները:

1-ին Հայաստանի Հանրապետության տարեկան պետական բյուջեներով

նախատեսված հատկացումների հաշվին բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով բնակարանային ապահովման ծրագրի մասին՝ 24 փետրվարի 2005 թվականի N 309-Ն որոշման համաձայն վկայագրի միջոցով բնակարան ձեռք բերելու համար աջակցություն ստանալու իրավունք ունեն այն անձինք՝ ովքեր Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի "1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրի մասին" N 747-Ն որոշմամբ հաստատված ծրագրով սահմանված չափանիշներին համապատասխան հաշվառվել են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչության կողմից՝ 2003 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ, և ընդգրկվել են մարզպետների կողմից հաստատված ցուցակներում:

1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթված անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչությունը մշակել էր համապատասխան ծրագիր, որը Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թ. դեկտեմբերի 14-ի N 56 արձանագրությամբ հավանության էր արժանացել:

Այդ ծրագիրը ներառում էր ազգամիջյան բախումներից տուժած և Ադրբեջանից բռնի տեղահանված ու Հայաստանում ապաստանած, մինչև այժմ մշտական օթևան չունեցող բոլոր փախստականների բնակարանային հիմնախնդիրը և նախատեսվում էր ծրագրի իրականացման արդյունքում հանրապետությունում հիմնովին լուծել փախստականներին բնակարանով ապահովելու խնդիրը:

Նշված ծրագրի շահառուներ են 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած փախստական (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած նախկին փախստական) ընտանիքները:

Վերը շարադրվածից հստակ երևում է, որ մշտապես Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող անձը չի կարող լինել որպես շահառու, հետևաբար Հասմիկ Նիկողոսյանը չէր կարող ընդգրկվել որպես վերը նշված պայմանագրի օվջակցություն ստացող՝ կողմ:

13 նոյեմբերի 2007 թվականին իրենց տրամադրվել է N Փ 11153 բնակարանի գնման վկայագիր, որի հիման վրա գնել են Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի օՉափիչի 3-րդ հանրակացարանի թիվ 52 բնակարանը: Վերը նշված իրավական նորմերի խախտումների արդյունքում նշված բնակարանի առուվաճառքի պայմանագրում որպես պայմանագրի կողմ հանդես է եկել նաև Հասմիկ Նիկողոսյանը: Հայերեն լեզվին չտիրապետելու և օրենքների չիմացության արդյունքում ինքը չի հասկացել, թե նման սխալների հետևանքներն ինչին կարող են հանգեցնել, իսկ պետական մարմինների կողմից թույլ տրված սխալների և Հասմիկ Նիկողոսյանի միտումնավոր քայլերի արդյունքում տրվել է սեփականության իրավունքի գրանցման վկայական, որով խախտվել են իր, որպես սեփականատիրոջ իրավունքները:

Ստացվում է, որ մի կերպ փրկվելով թուրք բարբարոսների խոշտանգումներից, թողնելով այնտեղ իրենց ամբողջ կարողությունը, ապաստան գտնելով Հայրենիքում՝ տարիներ շարունակ հուսալով ստանալ աջակցություն և վերջապես ունենալ սեփական անկյուն, որտեղ կարող էր հանգիստ անցկացնել իր ծերությունը, այստեղ հայրենիքում կարող են ևս զցել մոլորության մեջ և որոշ անձանց անտարբերության ու սխալների հետևանքով, կարող է զրկվել իր սեփականությունից:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրությամբ 8-րդ հոդվածը սահմանում է՝ Հայաստանի

Հանրապետությունում ճանաչվում պաշտպանվում է սեփականության իրավունքը:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության եւ պետության իրավունքներն ու օրինական շահերը: Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի: □Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին□ Եվրոպական կոնվենցիայի 1952թ-ի մարտի 20-ին Փարիզում ստորագրված և վավերացված արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորվում և պահպանվում են սեփականատիրոջ իրավունքները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածը սահմանում է, որ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

Հայցվորը խնդրել է՝ մասնակիորեն՝ Հասմիկ Նիկողոսյանի մասով, անվավեր ճանաչել ՀՀ 2007 թվականի Պետրյուշեով □բնակարանային ապահովում բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով□ ծախսային ծրագրով նախատեսված հատկացումների հաշվին անհատույց պետական ֆինանսական աջակցության տրամադրման մասին պայմանագիրը, 12.12.2007 թվականին Արմյան քաղաքի □Չափիչի□ 3-րդ հանրակացարանի թիվ 52 բնակարանի վեաբեյալ կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, դրա հիման վրա ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ □Արմյան□ տարածքային ստորաբաժանման կողմից 14.01.2008 թ-ին պետական գրանցման միասնական 4-53 մատյանի թիվ 121 համարի տակ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, համապատասխանաբար փոփոխություններ կատարել վերը նշված հասցեի վերաբերյալ տրված թիվ 2507863 սեփականության իրավունքի վկայականում՝ որպես համասեփականատերեր նշելով իրեն և որդուն՝ Ալբերտ Ղանիեյանցին, իսկ պատասխանող՝ Հասմիկ Նիկողոսյանին վտարել Արմյան քաղաքի □Չափիչի□ 3-րդ հանրակացարանի թիվ 52 բնակարանից:

Հայցվորը և նրա ներկայացուցիչը ներկայացնելով առարկություններ ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության հայցադիմումի պատասխանի դեմ, հայտնել են, որ ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունը առանց որևէ հիմնավորումների և մեկնաբանությունների ներկայացված հայցը համարել է անհիմն և ընդամենը հղում կատարելով □1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրի մասին□ N 747-Ն որոշմանը և չներկայացնելով պատշաճ ապացույց, ՀՀ քաղաքացի հանդիսացող Հասմիկ Նիկողոսյանին համարել է ծրագրի շահառու, սակայն ինչ կարգով և ինչ փաստաթղթերի հիման վրա է Հասմիկ Նիկողոսյանը համարվել վերը նշված ծրագրի շահառու, որևէ ձևով, ինչպես միգրացիոն պետական ծառայության, այնպես էլ Կոտայքի մարզպետարանի և պատասխանողի կողմից չապացուցվեց, այլ ընդամենը հղումներ կատարվեց օրենքի դրույթներին: Սակայն Անյա Ղանիեյանցի կողմից բազմիցս նշվում էր, որ Հասմիկ Նիկողոսյանին ընդգրկելով ընտանիքի անդամ և այդ ծրագրի շահառու, կազմվել է սահմանված կարգին ոչ համապատասխան ձևով արձանագրություն, որի հիման վրա է սահմանվում ծրագրում որպես շահառու ընտրված փախստական ընտանիքների կազմը: Նման ուսումնասիրություններ չի անցկացվել և արձանագրություն չի կազմվել, հետևյալ դեպքում

Կոտայքի մարզպետարանի, միգրացիոն պետական ծառայության կամ էլ պատասխանողի կողմից կներկայացվեր բնակարանի գնման վկայագրերի տրամադրման հերթացուցակը, ինչպես նաև ուսումնասիրության արդյունքում կայացված արձանագրությունը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Այսինքն կողմերը չներկայացրեցին պատշաճ ապացույց, որով կհիմնավորվեր Հ. Նիկողոսյանի՝ սահմանված կարգով, հերթացուցակում ընդգրկված լինելու հանգամանքը:

Պատասխանողի կողմից ներկայացված այն փաստարկը, որ իբրըստ ծրագրի իրականացման սկզբունքների 3-4 անձից կազմված ընտանիքներին բազմաբնակարան շենքում նախատեսվում էր երկու սենյականոց բնակարան, հետևաբար 1-2 անձից կազմված ընտանիքներին մեկ սենյականոց բնակարան.... , տրամաբանական չէ, քանի որ ըստ ՀՀ տարեկան պետական բյուջեներով նախատեսված հատկացումների հաշվին բնակարանների գնման վկայագրի տրամադրման միջոցով բնակարանային ապահովման ծրագրի մասին ՀՀ կառավարության որոշման համաձայն հստակ սահմանված է, որ ինը տարեկանից մեծ տարբեր սեռի երկու անձից բաղկացած ընտանիքին հատկացվում է երկու սենյականոց բնակարան, հետևաբար Հասմիկ Նիկողոսյանը ընտանիքի անդամ ընդգրկված լինել կամ չլինելու հանգամանքը չէր կարող ազդել հատկացվող բնակարանի սենյակների թվի ավելացման վրա: Ըստ ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության կողմից տրված գրության, փախստականի ընտանիքի վկայականում, որպես Ադրբեջանից բռնագաղթված անձինք հաշվառված են եղել Անյա Պողոսի Դանիելյանը և Ալբերտ Առնոլդի Դանիելյանը:

Այս ամենից ենթադրվում է, որ Հ. Նիկողոսյանը կատարված խախտումների արդյունքում է հանդիսացել բնակարանի գնման վկայագրի միջոցով անհատույց պետական ֆինանսական աջակցություն ստացող, ինչի հետևանքով և խախտվել է օրենքի պահանջները, արդյունքում խախտվել է նաև Անյա Դանիելյանցի սեփականության իրավունքը:

Հայցվորը և նրա ներկայացուցիչը խնդել են պատասխանողի կողմից ներկայացված առարկությունները համարել անհիմն և հայցը ամբողջությամբ բավարարել:

Դատարանում հայցվորը և նրա ներկայացուցիչը հայցը պնդեցին:

3. Պատասխանող Հասմիկ Սարիբեկի Նիկողոսյանի և նրա ներկայացուցիչ Անուշ Բորիսի Հակոբյանի դիրքորոշումը

Պատասխանող Հասմիկ Սարիբեկի Նիկողոսյանի ներկայացուցիչ Անուշ Բորիսի Հակոբյանը հայցադիմումի պատասխանում և դատարանում հայցի դեմ առարկեց և դատարանին հայտնեց, որ հայցվորը և նրա որդին՝ Ալբերտ Դանիելյանը 1989թ.-ի հուլիս ամսին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթվելուց հետո ՀՀ ԿԱ Միգրացիայի և փախստականների նախկին վարչության կողմից հաշվառվել են որպես փախստական: Հասմիկ Նիկողոսյանը Ալբերտ Դանիելյանցի հետ ամուսնացել է 1998թ.-ին: Նրանց ամուսնությունը գրանցվել է 23.02.1999թ.-ին ՔԿԱԳ մարմնի կողմից: 11.06.2010թ.-ին Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վճռով ամուսնալուծվել են: Ամուսնության առաջին իսկ օրվանից համատեղ բնակվել են Աբովյան քաղաքի Էներգետիկական քոլեջի հանրակացարանի թիվ 403 սենյակում, իսկ հայցվորը բնակվել է թիվ 406 սենյակում: Կողմերի և ՀՀ Կառավարության, ի դեմս Կոտայքի մարզպետի միջև կնքվել է ՀՀ 2007թ. պետական բյուջեով քանակարանային ապահովում բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով Ծախսային ծրագրով նախատեսված հատկացումների հաշվին անհատույց պետական ֆինանսական աջակցության տրամադրման մասին պայմանագիր, որով կողմերին

անհատույց տրամադրվել է բնակարանի գնման վկայագիր: 21.12.2007թ.-ին Հ. Մարտիրոսյանի և կողմերի միջև կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, համաձայն որի կողմերը ձեռք են բերել Աբովյան քաղաքի Ծափիչ 3-րդ հանրակացարանի թիվ 52 բնակարանը 8.250.000 ՀՀ դրամով: Հայցվորը նշել է, որ Հ. Նիկողոսյանը փախստական չի համարվել, ՀՀ քաղաքացի է և այդ պատճառով չէր կարող համարվել որպես բնակարանի գնման վկայագրի միջոցով անհատույց պետական ֆինանսական աջակցություն ստացող: ՀՀ Կառավարության 20.05.2004թ.-ի թիվ 747-Ն որոշմամբ հաստատված 1988-1992 թ.թ. Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագիրը նշակվել է փախստական ընտանիքների բնակարանով ապահովելու նպատակով և այն ծրագրի շահառուներն են 1988-1992թ.թ.-ին Ադրբեջանից բռնագաղթված փախստական ընտանիքները, իսկ ծրագրում որպես շահառու ընտրված փախստական ընտանիքների կազմը սահմանվում է ելնելով ուսումնասիրության ընթացքում արձանագրված ընտանիքի ներկա /փաստացի բնակվող/ անդամների թվից: 1988-1992թ.թ.-ին Ադրբեջանից բռնագաղթված անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրով ֆինանսական աջակցություն ստանալու ժամանակ Հ. Նիկողոսյանը Ա. Ղանիեյանցի հետ գտնվել է պետական գրանցում ունեցող ամուսնության մեջ և համարվել է որպես ընտանիքի անդամ, հետևաբար ընդգրկվել է որպես շահառու փախստական ընտանիքի կազմի մեջ: Հայցվորի եզրահանգումը, որ Հ. Նիկողոսյանը հանդիսանալով փախստական Ա. Ղանիեյանցի կինը, չպետք է ընդգրկվեր փախստական ընտանիքի կազմի մեջ, որպես նշված ծրագրով շահառու, զուրկ է որևէ իրավական հիմնավորումներից: ՀՀ Սահմանադրության 34,35 հոդ.հոդ. համաձայն՝ Ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը իրենց կամքի ազատ արտահայտությամբ ունեն ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք և յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: Պետությունը քաղաքացիների այդ իրավունքի իրականացման համար անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում: ՀՀ Կառավարության 24.02.2005թ.-ի թիվ 309-Ն որոշմամբ հաստատված ՀՀ տարեկան պետ.բյուջեով բնակարանային ապահովման ծախսային ծրագրով նախատեսված հատկացումների հաշվին բնակարանների գնման վկայագրերի միջոցով բնակարան /բնակելի տուն/ ձեռք բերելու համար աջակցություն ստանալու իրավունք ունեն այն անձինք՝

ա/ Ովքեր ՀՀ Կառավարության 10.06.1999թ.-ի ԾԱԿԵՒԻ գոտու բնակավայրերում քաղաքացիներին բնակարանների արտահերթ հատկացման կարգը հաստատելու մասին թիվ 432 որոշմամբ հաստատված կարգի համաձայն հաշվառված են բնակարան ստանալու համար՝ 2004թ.-ի մարտի 1-ի դրությամբ:

բ/ Ովքեր ՀՀ Կառավարության 20.05.2004թ.-ի ԾԱԿԵՒԻ 1988-1992 թ.թ. Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրի մասին թիվ 747-Ն որոշմամբ հաստատված ծրագրով սահմանված չափանիշներին համապատասխան հաշվառվել են ՀՀ ԿԱ Միգրացիայի և փախստականների վարչության կողմից 2003թ.-ի օգոստոսի 1-ի դրությամբ և ընդգրկվել են մարզպետների կողմից հաստատված ցուցակներում:

Սույն կարգի 5-րդ կետի համաձայն վկայագրում նշվող աջակցության գումարը հանդիսանում է աջակցություն ստացողի և նրա ընտանիքի անդամների հավասար բաժիններով բաժնային սեփականություն, որի չափով ձանաչվում է նրանց սեփականության իրավունքը ձեռք բերվող բնակարանի նկատմամբ:

Սույն կարգի 9-րդ կետի համաձայն վկայագրում նշվող աջակցության չափը որոշվում է սույն կետով սահմանված նորմաներով

աջակցություն ստանալու իրավունք ունեցող անձի ընտանիքին /անձանց թվով/ հասանելիք բնակարանի /սենյակների թվով/ տվյալ բնակավայրում 01.05.2005թ.-ի դրությամբ ձևավորված շուկայական միջինացված արժեքից:

Սույն կարգի 3-րդ կետի բ/ ենթակետով նշված անձանց համար ընտանիքին հասանելիք բնակարանի սենյակների թիվը որոշվում է ելնելով ՀՀ Կառավարության 20.05.2004թ.-ի օրենքի 1988-1992 թ.թ. Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրի մասին օրենքի 747-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 5-րդ բաժնի 4-րդ կետի ա/ ենթակետով սահմանված նորմերով:

Նշված ծրագրի 5-րդ բաժնի 4-րդ կետի ա/ ենթակետով նախատեսված է, որ բնակարանային ապահովությունը իրականացվում է բազմաբնակարան շենքերում հետևյալ նորմերով՝ 1-2 անձից բաղկացած ընտանիքներին՝ մեկ սենյականոց բնակարան, 3-4 անձից բաղկացած ընտանիքներին՝ երկու սենյականոց բնակարան:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա. Դանիելյանցի ընտանիքը կազմված է եղել 3 անձից, ընտանիքը ստացել է երկու սենյականոց բնակարանի համար տրամադրվող աջակցության չափը: Իսկ ինչ վերաբերում է հայցվորի կողմից արված հայտարարությանը, որ Հ. Նիկողոսյանը ընտանիքի կազմի մեջ ընդգրկվելու հանգամանքը չէր կարող ազդել հատկացվող բնակարանի սենյակների թվի ավելացման վրա, անհիմն է, քանի որ իր կողմից հիշատակված նորմի դրույթները վերաբերում էր վկայագրի միջոցով բնակարան ձեռք բերելու համար աջակցություն ստանալու իրավունք ունեցող այն անձանց, ովքեր ՀՀ

Կառավարության 10.06.1999թ.-ի օրենքի գոտու բնակավայրերում քաղաքացիներին բնակարանների արտահերթ հատկացման կարգը հաստատելու մասին օրենքի 432 որոշմամբ հաստատված կարգի համաձայն հաշվառված են եղել բնակարան ստանալու համար՝ 2004թ.-ի մարտի 1-ի դրությամբ:

ՀՀ Կառավարության 24.02.2005թ.-ի օրենքի 309-Ն որոշմամբ հաստատված ՀՀ տարեկան պետ.բյուջեով բնակարանային ապահովման ծախսային ծրագրով նախատեսված հատկացումների հաշվին բնակարանների գնման վկայագրի տրամադրման կարգի 24,26 կետերի համաձայն մարզպետը կազմում է վկայագրի միջոցով աջակցություն ստացող անձանց ցուցակներ և դրանք ներկայացնում է ՀՀ քաղաքաշինության նախարարին՝ հաստատման: Վերջինս հաստատում է աջակցություն ստացող անձանց ցուցակները և 5 օրյա ընթացքում ծանուցում է անձանց՝ նրանց առաջարկելով մարզպետի հետ կնքել պայմանագիր՝ վկայագրի միջոցով բնակարան ձեռք բերելու աջակցություն ստանալու համար: Հետևաբար, ոչ մարզպետարանը, ոչ էլ միգրացիոն պետական ծառայությունը չէր կարող տրամադրել բնակարանի գնման վկայագրերի տրամադրման հերթացուցակները: Իսկ այն փաստը, որ կողմերի և ՀՀ Կառավարության, ի դեմս Կոտայքի մարզպետի միջև կնքվեց ՀՀ 2007թ. պետ.բյուջեով օրենքի 309-Ն որոշմամբ բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով ծախսային ծրագրով նախատեսված հատկացումների հաշվին անհատույց պետական ֆինանսական աջակցության տրամադրման մասին պայմանագիր, ապացուցում է, որ Հ. Նիկողոսյանը ընդգրկվել է որպես շահառու, օրենքով սահմանված կարգով:

Ինչ վերաբերում է հայցվորի կողմից վկայակոչված ՀՀ քաղ. դատ. օր.-ի 48 հոդ.-ի 1-ին մասի դրույթներին, ապա հայցվորն է հանդիսանում պահանջ ներկայացնող կողմ և նա է պարտավոր ապացուցելու իր պահանջի հիմքում ընկած հանգամանքները: Ղատարանում պատասխանող Հասմիկ Նիկողոսյանը և նրա ներկայացուցիչ Անուշ Հակոբյանը խնդրեցին հայցը մերժել, այն անհիմն լինելու պատճառաբանությամբ:

4. Երրորդ անձ՝ Ալբերտ Առնուլդի Դանիելյանցի և նրա

ներկայացուցիչ Սիրանուշ Վալերի Հարությունյանի դիրքորոշումը

Երրորդ անձ՝ Ալբերտ Առնոլդի Դանիելյանը և նրա ներկայացուցիչ Սիրանուշ Վալերի Հարությունյանը ներկայացված հայցի դեմ առարկություն չհայտնեցին և դատարանին խնդրեցին հայցը բավարարել: Ա. Դանիելյանը միաժամանակ փաստեց, որ 2003թ.-ին փախստականների վարչությունից և մարզպետարանից այցելել են իրենց բնակարան և հետաքրքրվել, թե ովքեր են բնակվում իրենց տանը:

5. Երրորդ անձ՝ Կոտայքի մարզպետարանի ներկայացուցիչներ՝ Աբրահամ Աբելի Հարությունյանի և Վանիկ Դերենիկի Հունանյանի դիրքորոշումը

Երրորդ անձ՝ Կոտայքի մարզպետարանի ներկայացուցիչներ՝ Աբրահամ Աբելի Հարությունյանը և Վանիկ Դերենիկի Հունանյանը հայցի վերաբերյալ հայտնեցին որ ՀՀ Կոտայքի մարզպետարանը գտնում է որ հայցն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ՝
Համաձայն ՀՀ Կառավարության 20.05.2004թ.-ի թիվ 747-Ն, 24.02.2005թ.-ի թիվ 309-Ն որոշումների և 18.03.2005թ.-ին վարչապետի կողմից հաստատված «ՀՀ տարեկան պետական բյուջեներով՝ բնակարանային ապահովման ծախսային ծրագրով նախատեսված հատկացումների հաշվին բնակարանների գնման վկայագրերի տրամադրման» կարգով Հասմիկ Նիկողոսյանը հանդիսացել է շահառու և ընդգրկվել է փախստական ընտանիքի կազմի մեջ, որի արդյունքում հայցվորին և որդուն մեկ սենյականոց բնակարանի փոխարեն հատկացվել է երկու սենյականոց բնակարան ձեռք բերելու համար նախատեսված գումար: Համաձայն այդ դրույթների՝ 1-2 անձին հատկացվում է 1 սենյականոց բնակարան, 3-4 անձին՝ 2 սենյականոց բնակարան: Գործով պատասխանող Հասմիկ Նիկողոսյանը հանդիսանում է փախստականի ընտանիքի անդամ և ՀՀ Կառավարության թիվ 747-Ն որոշման ծրագրի շրջանակում որպես շահառու:

6. Երրորդ անձ՝ ՀՀ Տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն պետական ծառայության պետ Գ. Եզանյանի դիրքորոշումը

Երրորդ անձ՝ ՀՀ Տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն պետական ծառայության պետ Գ. Եզանյանը խնդրելով հայցը քննության առնել ծառայության ներկայացուցչի բացակայությամբ, հայտնել է, որ հայցն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ համաձայն ՀՀ Կառավարության 2004թ.-ի մայիսի 20-ի թիվ 747-Ն որոշմամբ սահմանված 1988-1992թ.թ. ծրագրի շահառուների ընտրության չափանիշների՝ Հասմիկ Նիկողոսյանը, որպես 1988-1992 թ.թ. Ադրբեջանից բռնագաղթած Ալբերտ Դանիելյանցի ընտանիքի անդամ, հանդիսացել է այդ ծրագրի շահառու և բնակարանի գնման վկայագրի միջոցով անհատույց ֆինանսական աջակցություն ստացող:

Համաձայն ՀՀ քաղ. դատ. օր.-ի 118 հոդ.-ի 1-ին մասի հայցը քննության առնվեց ՀՀ Տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն պետական ծառայության ներկայացուցչի բացակայությամբ:

II.

1. Գործի փաստերը

1. Վիճելի բնակարանի սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենը, համաձայն որի առկա է երեք

սեփականատեր,

2. Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի պատճենը,
3. ՀՀ Կառավարության 24.02.2005թ.-ի թիվ 309-Ն որոշումը,
4. ՀՀ Կառավարության 20.05.2004թ.-ի թիվ 747-Ն որոշումը,
5. Պատասխանող Հ. Նիկողոսյանը հանդիսացել է 1988-1992 թ.թ.

Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրի շահառու,

6. Հայցվորին իր որդու հետ հատկացվել է երկու սենյականոց բնակարան գնելու իրավունք Հ. Նիկողոսյանի ընտանիքի անդամ հանդիսանալու հիմքով, համաձայն ՀՀ Կառավարության 20.05.2004թ.-ի թիվ 747-Ն որոշման առաջնահերթ ծրագրի 5-րդ բաժնի 4-րդ կետի ա/ ենթակետի,

7. Հ. Նիկողոսյանը համաձայն նույն ծրագրի 4-րդ գլխի հանդիսացել է փախստական ընտանիքի անդամ և հետևաբար նույն ծրագրով որպես շահառու:

2. Կիրառելի իրավունքը /իրավական հիմքեր/

- ՀՀ Կառավարության 20.05.2004թ.-ի թիվ 747-Ն որոշումը,
- ՀՀ Կառավարության 24.02.2005թ.-ի թիվ 309-Ն որոշումը,

3. Վերլուծություն

Ղատարանը լսելով կողմերի ցուցմունքները, վերլուծության ենթարկելով գործով ձեռք բերված ապացույցները և յուրաքանչյուր ապացույց գնահատելով գործում եղած ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա, ներքին համոզմամբ, հանգում է այն հետևության, որ հայքը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

Ղատարանը հաստատված է համարում հետևյալ հանգամանքները՝ Հայցվոր Անյա Դանիելյանը և նրա որդին՝ Ալբերտ Դանիելյանը Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթվելուց հետո ՀՀ Կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների նախկին վարչության կողմից հաշվառվել են որպես փախստական և ՀՀ Կառավարության 2004թ. մայիսի 20-ի 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրի մասին N 747-Ն որոշմամբ հաստատված ծրագրով ընդգրկվել են բնակարանի գնման վկայագրերի տրամադրման հերթացուցակում:

1998 թ-ի դեկտեմբեր ամսին հայցվորի որդին ամուսնացել է պատասխանող Հասմիկ Նիկողոսյանի հետ և միասին բնակվել են Աբովյան քաղաքի Էներգետիկական քոլեջի հանրակացարանի 403 սենյակում:

ՀՀ Կառավարության, ի դեմս Կոտայքի մարզպետի և կողմերի միջև կնքվել է ՀՀ 2007 թվականի Պետբյուջեով օբնակարանային ապահովում բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով օժախսային ծրագրով նախատեսված հատկացումների հաշվին անհատույց պետական ֆինանսական աջակցության տրամադրման մասին պայմանագիր (այսուհետ պայմանագիր), որով հայցվորն, որդուն և նրա կնոջը, որպես աջակցություն ստացողի, անհատույց տրամադրվել է բնակարանի գնման վկայագիր, որն անվանական փաստաթուղթ է և որով հավաստվում է վկայագիր ստացած անձի կողմից ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից պատրաստի բնակարանի /բնակելի տան/ ձեռքբերման համար անհատույց պետական ֆինանսական աջակցություն ստանալու իրավունքը:

ՀՀ Կառավարության 2004թ.-ի մայիսի 20-ի թիվ 747-Ն որոշմամբ սահմանված 1988-1992թ.թ. ծրագրի շահառուների ընտրության չափանիշների՝ Հասմիկ Նիկողոսյանը, որպես 1988-1992 թ.թ. Ադրբեջանից բռնագաղթած Ալբերտ Դանիելյանի ընտանիքի անդամ, հանդիսացել է այդ ծրագրի շահառու և բնակարանի գնման վկայագրի միջոցով անհատույց ֆինանսական աջակցություն է ստացել:

Համաձայն ՀՀ Կառավարության 24.02.2005թ.-ի թիվ 309 որոշման 3-րդ կետի բ/ ենթակետի՝ վկայագրի միջոցով բնակարան ձեռք բերելու համար աջակցություն ստանալու իրավունք ունեցող անձինք են նրանք, ովքեր ՀՀ Կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչության կողմից 2003թ.-ի օգոստոսի 1-ի դրությամբ ընդգրկվել են մարզպետների կողմից հաստատված ցուցակներում: Վկայագրում նշվող աջակցության գումարը հանդիսանում է աջակցություն ստացողի և նրա ընտանիքի անդամների հավասար բաժիններով բաժնային սեփականություն, որի չափով ձանաչվում է նրանց սեփականության իրավունքը ձեռք բերվող բնակարանի նկատմամբ:

Հասմիկ Նիկողոսյանի շահառու լինելու փաստը հաստատվում է նաև այն հանգամանքով, որ համաձայն ՀՀ Կառավարության 20.05.2004թ.-ի թիվ 747-Ն որոշման առաջնահերթ ծրագրի 5-րդ բաժնի 4-րդ կետի ա/ ենթակետի 1-2 անձից բաղկացած ընտանիքներին տրվում է 1 սենյականոց բնակարան, 3-4 անձից կազմված ընտանիքին՝ 2 սենյականոց բնակարան: Այստեղից անհրաժեշտ է հանգել այն հետևության, որ կողմերին 2 սենյականոց բնակարանի հատկացումը պայմանավորված է ընտանիքի 3 անձի՝ Հասմիկ Նիկողոսյանի առկայությամբ, այլապես հայցվորն ու նրա որդին կստանային մեկ սենյականոց բնակարան:

Ղատարանը հայցը մերժելիս փաստում է, որ բացակայում են պայմանագիրը մասնակի անվավեր ձանաչելու և որպես հետևանք անշարժ գույքի կադաստրի գրանցամատյանում մասնակի փոփոխություն կատարելու հիմքերը և հանգում է այն հետևության, որ բնակարանից պատասխանողի վտարման մասով հայցը, որպես հետևանքի, նույնպես ենթակա է մերժման, առանց դատարանի կողմից պատճառաբանման:

Ղատարանը միաժամանակ փաստում է, որ համաձայն ՀՀ քաղ. դատ. օր.-ի 48 հոդվածի դրույթների՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Ղատարանության ընթացքում հայցվորը այնդելով իր պահանջները, այնուհանդերձ չներկայացրեց որևէ հիմնավոր ապացույց իր կողմից իր իրավունքները խելամիտ և բարեխիղճ իրականացնելու հիմքում ընկած հանգամանքները հաստատելու վերաբերյալ, մինչդեռ պատասխանողի առարկությունների հիմքում ընկած ապացույցների գնահատման արդյունքում դատարանը եզրահանգում է, որ այդ փաստարկներն ավելի հիմնավորված և պատճառաբանված են պահանջը մերժելու համար:

Ղատական ծախսեր- Նկատի ունենալով, որ հայցը մերժվում է և դատարանի որոշմամբ հայցվորը ազատվել է պետական տուրքի նախնական վճարումից, դատարանը գտավ, որ հայցվորից հօգուտ պետական բյուջեի պետք է բռնագանձել 8.000 ՀՀ դրամ, որպես պետական տուրքի գումար:

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղ. դատ. օրի 130-132-րդ հոդվածներով դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

1. Անյա Պողոսի Դանիելյանցի հայցն ընդդեմ Հասմիկ Սարիբեկի Նիկողոսյանի, երրորդ անձինք՝ Ալբերտ Առնոլդի Դանիելյանցի, ՀՀ Կոտայքի մարզպետարանի, ՀՀ Տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության՝ բնակարանի գնման պայմանագիրը մասնակի անվավեր ձանաչելու, անշարժ գույքի կադաստրի գրանցամատյանում կատարված գրառումը և դրա հիման վրա տրված սեփականության իրավունքի գրանցման

	<p>վկայականը մասնակի փոփոխելու ու բնակարանից վտարելու պահանջների մասին, մերժել ամբողջությամբ:</p> <p>2. Անյա Պողոսի Դանիելյանցից հոգուտ պետական բյուջեի բռնագանձել 8.000 ՀՀ դրամ, որպես պետական տուրքի գումար: Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում: Վճիռը կամովին չկատարելու դեպքում դա կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:</p> <p>ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ Ս. ԹՈՐՈՍՅԱՆ</p>
Դատական ակտի ամսաթիվը:	10-11-2010
Ակտով հոգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ. տուրքի չափը (<< դրամ):	8000
Ամսաթիվ:	13-12-2010
Այլ նշումներ:	
Տրվել է կատարողական թերթ:	16-12-2010
Հօգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ. տուրքի չափը (<< դրամ):	8000
Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:	22-12-2010
Էջերի քանակը:	92
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	24-12-2010
Էջերի քանակը:	92
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	17-04-2012
Էջերի քանակը:	92
Գործին կից նյութերը:	
Որ դատարան է ուղարկվել:	Քաղաքացիական վերաքննիչ
Ուր է ուղարկվել:	
Ելքի գրության համար:	Ե-1007/12
Ամսաթիվ:	25-04-2012
Ամսաթիվ:	20-07-2012

Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	29-06-2012
Այլ նշումներ:	
Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:	31-07-2012
Էջերի քանակը:	Հատոր 1-ին 92, հատոր 2-րդ՝ 87
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	31-07-2012
Էջերի քանակը:	Հատոր 1-ին 92, հատոր 2-րդ՝ 87
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	27-09-2012
Էջերի քանակը:	1-ին հատոր՝ 92, 2-րդ՝ 87
Գործին կից նյութերը:	
Որ դատարան է ուղարկվել:	Քաղաքացիական վերաքննիչ
Ուր է ուղարկվել:	
Ելքի գրության համար:	Ե-1437/12
Ամսաթիվ:	29-09-2012
Ամսաթիվ:	08-01-2013
Գործը ստացվել է:	Գործը ստացվել է բեկանումից հետո նոր քննության համար
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	27-12-2012
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Աբովյան
Դատավորի անուն:	Նելլի Լիպարիտի Գալստյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Աբովյան
Դատավորի անուն:	
Այլ նշումներ:	
Որոշման ամսաթիվ:	08-01-2013
Այլ նշումներ:	

Դատաքննության ամսաթիվ:	01-02-2013
Ծանուցագիրը ուղարկվել է:	08-01-2013
Այլ նշումներ:	
Ժամ:	17:00
Նիստերի դահլիճի համար:	2
Նշանակվել է:	Դատաքննություն
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Դատաքննության ամսաթիվ:	05-03-2013
Ծանուցագիրը ուղարկվել է:	01-02-2013
Այլ նշումներ:	
Ժամ:	10:30
Նիստերի դահլիճի համար:	2
Նշանակվել է:	Դատաքննություն
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Ներկայացվել է միջնորդություն:	Ապահովում կիրառելու
Բավ/մերժ:	Բավարարվել է
Որոշման ամսաթիվ:	05-02-2013
Տրվել է կատարողական թերթ:	05-02-2013
Հայցի ապահովման միջոցները:	Գույքի դրամական միջոցների վրա արգելանք դնելը
Այլ նշումներ:	
Նշանակվել է դատական նիստ:	
Որոշման բովանդակություն:	
Դատաքննության ամսաթիվ:	14-03-2013
Ծանուցագիրը ուղարկվել է:	05-03-2013
Այլ նշումներ:	
Ժամ:	09:30
Նիստերի դահլիճի համար:	2
Նշանակվել է:	Վճիռ/որոշում հրապարակելու օր
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Հայցի լուծման ամսաթիվ:	14-03-2013
Հայցի լուծումը:	Բավարարվել է մասնակի
Հոդված	
Հոդված	130-132
Հակընդդեմ հայցի լուծումը:	
Հակընդդեմ հայցի լուծման ամսաթիվ:	
Այլ նշումներ:	

Օրենսգիրք: Քաղաքացիական դատավարության օրենսգիրք

Դատական ակտ (վճիռ, որոշում):

ԿԴ1/0553/02/10

Վ Ճ Ի Ռ
ՀԱՆՈՒՄՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
14.03.2013թ. քաղաք Աբովյան

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան նախագահությամբ դատավոր Նելլի Գալստյան քարտուղարությամբ՝ Լիաննա Պողոսյանի մասնակցությամբ՝ հայցվոր՝ Անյա Դանիելյանցի լիազորված անձ՝ Աստղիկ Ղազարյան /անձնագիր AH0653142 տրված 13.08.2008թ. 019-ի կողմից, փաստաբանական գործունեության արտոնագիր թիվ 210/ պատասխանող՝ Հասմիկ Նիկողոսյան /անձնագիր AF0350510 տրված 24.07.2001թ. 043-ի կողմից/ երրորդ անձ՝ Ալբերտ Դանիելյանց /անձնագիր AF0566023 տրված 09.03.2002թ. 019-ի կողմից/

դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի Անյա Պողոսի Դանիելյանցի /անձնագիր AH0214734 տրված 21.06.2006թ. 019-ի կողմից/ ընդդեմ Հասմիկ Սարիբեկի Նիկողոսյանի, երրորդ անձինք՝ Ալբերտ Առնոլդի Դանիելյանցի, ՀՀ Կոտայքի մարզպետարանի, ՀՀ Տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության՝ պայմանագրերը մասնակի անվավեր ճանաչելու, անշարժ գույքի կադաստրի գրանցամատյանում կատարված գրառումը և դրա հիման վրա տրված սեփականության իրավունքի գրանցման վկայականը մասնակի փոփոխելու, բնակարանից վտարելու պահանջների մասին.

ՊԱՐԶԵՑ

I

1. Դատավարական նախապատմությունը

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 10.11.2010թ. վճռով մերժվել է Անյա Պողոսի Դանիելյանցի հայցն ընդդեմ Հասմիկ Սարիբեկի Նիկողոսյանի, երրորդ անձինք՝ Ալբերտ Առնոլդի Դանիելյանցի, ՀՀ Կոտայքի մարզպետարանի, ՀՀ Տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության՝ բնակարանի գնման պայմանագիրը մասնակի անվավեր ճանաչելու, անշարժ գույքի կադաստրի գրանցամատյանում կատարված գրառումը և դրա հիման վրա տրված սեփականության իրավունքի գրանցման վկայականը մասնակի փոփոխելու ու բնակարանից վտարելու պահանջների մասին:

Նշված վճռի դեմ Անյա Դանիելյանցի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք՝ նոր երևան եկած հանգամանքներով վճիռը վերանայելու մասին:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.11.2012թ. որոշմամբ Անյա Պողոսի Դանիելյանցի վերաքննիչ բողոքը բավարարվել է: ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 10.11.2010թ. թիվ ԿԴ1/0553/02/10 քաղաքացիական գործով կայացրած վճիռը բեկանվել է և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 08.01.2013թ. որոշմամբ քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ:

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 05.02.2013թ. որոշմամբ բավարարվել է հայցվորի լիազորված անձի միջնորդությունը և որպես հայցի ապահովման միջոց արգելանք է դրվել Արուսյան քաղաքի “Չափիչի” 3-րդ հանրակացարանի թիվ 52 բնակարանի վրա՝ արգելելով որևէ գործարք կնքել տվյալ բնակարանի վերաբերյալ՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի ուժի մեջ մտնելը:
Հակընդդեմ հայց չի հարուցվել:

2. Հայցվորի դիրքորոշումը

Հայցվոր Անյա Դանիելյանը դիմելով դատարան, իսկ դատարանում հայցվորի լիազորված անձը հայցը պնդելով ցուցմունք տվեց, որ Անյա Պողոսի Դանիելյանը դիմելով դատարան խնդրել է մասնակիորեն՝ Հասմիկ Նիկողոսյանի մատով, անվավեր ճանաչել ՀՀ 2007 թվականի պետական բյուջեով “բնակարանային ապահովում բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով” ծախսային ծրագրով նախատեսված հատկացումների հաշվին անհատույց պետական ֆինանսական աջակցության տրամադրման մասին պայմանագիրը, 12.12.2007թվականին Արուսյան քաղաքի “Չափիչի” 3-րդ հանրակացարանի թիվ 52 բնակարանի վերաբերյալ կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, դրա հիման վրա ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Արուսյանի տարածքային ստորաբաժանման կողմից 14.01.2008թ. պետական գրանցման միասնական 4-53 մատյանի թիվ 121 համարի տակ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, համապատասխանաբար փոփոխություններ կատարել վերը նշված հասցեի վերաբերյալ տրված թիվ 2507863 սեփականության իրավունքի գրանցման վկայականում՝ որպես համասեփականատերեր նշելով իրեն և որդուն՝ Ալբերտ Դանիելյանցին, իսկ պատասխանող՝ Հասմիկ Նիկողոսյանին վտարել Արուսյան քաղաքի “Չափիչի” 3-րդ հանրակացարանի թիվ 52 բնակարանից:

Հայցվորը պատճառաբանել է, որ 1988-1992թ.թ. Ադրբեջանից բռնագաղթված անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրով ծրագրի շահառուներ են հանդիսացել 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած փախստական (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած նախնիին փախստական) ընտանիքները, հետևաբար Հասմիկ Նիկողոսյանը չէր կարող ընդգրկվել որպես վերը նշված պայմանագրի “Աջակցություն ստացող” կողմ:

Դատարանը հայցը մերժել է հաշվի առնելով, որ Հասմիկ Նիկողոսյանը որպես 1988-1992 թ.թ. Ադրբեջանից բռնագաղթած Ալբերտ Դանիելյանցի ընտանիքի անդամ վերջինիս կինը, հանդիսացել է այդ ծրագրի շահառու և բնակարանի գնման վկայագրի միջոցով անհատույց ֆինանսական աջակցություն ստացող:

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 17.07.2012թ. վճռով Ալբերտ Դանիելյանցի և Հասմիկ Նիկողոսյանի ամուսնությունն անվավեր է ճանաչվել, քանի որ Ալբերտ Դանիելյանցի հետ ամուսնությունը գրանցելիս Հասմիկ Նիկողոսյանը գրանցված ամուսնության մեջ է գտնվել մեկ այլ անձի հետ, որի մասին Ալբերտ Դանիելյանցը չի իմացել և ՀՀ ընտանեկան օրենսգրքի 11-րդ հոդվածով սահմանված կարգով արգելվում էր նրանց ամուսնության գրանցումը:

Համաձայն ընտանեկան օրենսգրքի 20-րդ հոդվածի 4-րդ կետի՝ ամուսնությունն անվավեր է ճանաչվում դրա պետական գրանցման պահից:

Համաձայն ՀՀ կառավարության 24.02.2005թ. թիվ 309-Ն որոշմամբ հաստատված “ՀՀ տարեկան պետ. բյուջեներով՝ բնակարանային

ապահովման ծախսային ծրագրով նախատեսված հատկացումների հաշվին բնակարանների գնման վկայագրերի տրամադրման” կարգի 9-րդ կետի՝ վկայագրում նշվող աջակցության չափը որոշվում է սույն կետով սահմանված նորմաներով աջակցություն ստանալու իրավունք ունեցող անձի ընտանիքին (անձանց թվով) հասանելիք բնակարանի (սենյակների թվով) տվյալ բնակավայրում 2005թ. մայիսի 1-ի դրությամբ ձևավորված շուկայական միջինացված արժեքից:

Վկայագիր ստանալուն հավակնող անձի ընտանիքին հասանելիք բնակարանի սենյակների թիվը համաձայն ՀՀ կառավարության 24.02.2005թ. թիվ 309-Ն որոշմամբ հաստատված “ՀՀ տարեկան պետ. բյուջեներով՝ բնակարանային ապահովման ծախսային ծրագրով նախատեսված հատկացումների հաշվին բնակարանների գնման վկայագրերի տրամադրման” կարգի 3-րդ կետի “ա” ենթակետում նշված անձանց համար որոշվում է՝ միևնույն սեռի կամ տարբեր սեռի երկու անձից բաղկացած ընտանիքին, եթե երեխան ինը տարեկանից փոքր է, ինչպես նաև ամուսիններին՝ 1-սենյականոց բնակարան, ինը տարեկանից մեծ տարբեր սեռի երկու անձից (բացի ամուսիններից) և երեք անձից բաղկացած ընտանիքին՝ 2-սենյականոց բնակարան:

Հասմիկ Նիկողոսյանը Անյա Դանիելյանցի ընտանիքի անդամ չէր կարող լինել, քանի որ նրա և Ալբերտ Դանիելյանցի ամուսնությունը կնքման պահից անվավեր էր, ուստի նա չպետք է հանդես գար որպես շահառու և բնակարանի գնման վկայագրի միջոցով անհատույց ֆինանսական աջակցություն ստացող, իսկ առանց նրա էլ Անյա Դանիելյանցի ընտանիքին՝ իրեն և որդուն՝ Ալբերտ Դանիելյանցին, պետք է տրամադրվեր երկու սենյականոց բնակարան, որը և հատկացվել է:
Խնդրեց հայցը բավարարել ամբողջությամբ:

3. Պատասխանողների դիրքորոշումը

Պատասխանող Հասմիկ Սարիբեկի Նիկողոսյանը հայցի դեմ առարկեց, ցուցմունք տալով, որ հայցվորը և նրա որդին՝ Ալբերտ Դանիելյանցը 1989թ. հուլիս ամսին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթվելուց հետո ՀՀ ԿԱ Միգրացիայի և փախստականների նախկին վարչության կողմից հաշվառվել են որպես փախստական: Ինքը Ալբերտ Դանիելյանցի հետ ամուսնացել է 1998թ.-ին: Իրենց ամուսնությունը գրանցվել է 23.02.1999թ.-ին ՔԿԱԳ մարմնի կողմից: Ամուսնության առաջին իսկ օրվանից համատեղ բնակվել են Աբովյան քաղաքի Էներգետիկական քուլեջի հանրակացարանի թիվ 403 սենյակում, իսկ հայցվորը բնակվել է թիվ 406 սենյակում: Կողմերի և ՀՀ Կառավարության, ի դեմս Կոտայքի մարզպետի միջև կնքվել է ՀՀ 2007թ. պետական բյուջեով “բնակարանային ապահովում բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով” ծախսային ծրագրով նախատեսված հատկացումների հաշվին անհատույց պետական ֆինանսական աջակցության տրամադրման մասին պայմանագիր, որով կողմերին անհատույց տրամադրվել է բնակարանի գնման վկայագիր: 21.12.2007թ.-ին Հ. Մարտիրոսյանի և կողմերի միջև կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, համաձայն որի ձեռք են բերել Աբովյան քաղաքի “Չափիչ” 3-րդ հանրակացարանի թիվ 52 բնակարանը 8.250.000 ՀՀ դրամով: Գտնում է, որ 8.250.000 ՀՀ դրամը հատկացվել է երեք անձի, այն է՝ հայցվորին, երրորդ անձ Ալբերտ Դանիելյանցին և իրեն, հետևաբար գտնում է, որ հայցն անհիմն է և ենթակա մերժման:

4. Երրորդ անձանց դիրքորոշումը.

Երրորդ անձ Ալբերտ Առնուդի Դանիելյանցը հայցի դեմ չառարկեց, ցուցմունք տալով, որ 1988-1992թ.թ. Ադրբեջանից բռնագաղթված անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրով

ծրագրի շահառուներ են հանդիսացել 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած փախստական (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած նախկին փախստական) ընտանիքները, հետևաբար Հասմիկ Նիկողոսյանը չէր կարող ընդգրկվել որպես վերը նշված պայմանագրի “Աջակցություն ստացող” կողմ:

Ղատարանը Անյա Ղանիեյանցի հայցը մերժել էր հաշվի առնելով, որ Հասմիկ Նիկողոսյանը որպես իր ընտանիքի անդամ, հանդիսացել է այդ ծրագրի շահառու և բնակարանի գնման վկայագրի միջոցով անհատույց ֆինանսական աջակցություն ստացող:

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 17.07.2012թ. վճռով իր և Հասմիկ Նիկողոսյանի ամուսնությունն անվավեր է ճանաչվել, քանի որ իր հետ ամուսնությունը գրանցելիս Հասմիկ Նիկողոսյանը գրանցված ամուսնության մեջ է գտնվել մեկ այլ անձի հետ, որի մասին ինքը չի իմացել և ՀՀ ընտանեկան օրենսգրքի 11-րդ հոդվածով սահմանված կարգով արգելվում էր իրենց ամուսնության գրանցումը:

Համաձայն ընտանեկան օրենսգրքի 20-րդ հոդվածի 4-րդ կետի՝ ամուսնությունն անվավեր է ճանաչվում դրա պետական գրանցման պահից:

Հետևաբար Հասմիկ Նիկողոսյանը Անյա Ղանիեյանցի ընտանիքի անդամ չէր կարող լինել, քանի որ նրա և իր ամուսնությունը կնքման պահից անվավեր էր, ուստի նա չպետք է հանդես գար որպես շահառու և բնակարանի գնման վկայագրի միջոցով անհատույց ֆինանսական աջակցություն ստացող, իսկ առանց նրա էլ Անյա Ղանիեյանցի ընտանիքին՝ իրեն և մորը պետք է տրամադրվեր երկու սենյականոց բնակարան, որը և հատկացվել է: Խնդրեց հայցը բավարարել:

Երրորդ անձինք՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանը և ՀՀ Տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունը պատշաճ կարգով ծանուցվել են դատական նիստի տեղի և ժամանակի մասին, սակայն նրանց ներկայացուցիչները չեն ներկայացել: Նրանց չներկայանալն արգելք չէ գործի քննության համար:

II

1. Գործի համար էական նշանակություն ունեցող փաստերը

Վիճելի բնակարանի սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենը:

Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի պատճենը:

ՀՀ Կառավարության 24.02.2005թ.-ի թիվ 309-Ն որոշումը:

ՀՀ Կառավարության 20.05.2004թ.-ի թիվ 747-Ն որոշումը:

Պատասխանող Հ. Նիկողոսյանը հանդիսացել է 1988-1992 թ.թ.

Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային

ապահովության առաջնահերթ ծրագրի շահառու:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի

10.11.2010թ. վճռով մերժվել է Անյա Պողոսի Ղանիեյանցի հայցն

ընդդեմ Հասմիկ Սարիբեկի Նիկողոսյանի, երրորդ անձինք՝ Ալբերտ

Առնոլդի Ղանիեյանցի, ՀՀ Կոտայքի մարզպետարանի, ՀՀ

տարածքային կառավարման նախարարության միգրացիոն

պետական ծառայության՝ պայմանագրերը մասնակի անվավեր

ճանաչելու, անշարժ գույքի կադաստրի գրանցամատյանում

կատարված գրառումը և դրա հիման վրա տրված սեփականության

իրավունքի գրանցման վկայականը մասնակի փոփոխելու,

բնակարանից վտարելու պահանջների մասին:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի

17.07.2012թ. օրինական ուժի մեջ մտած վճռով անվավեր է

ճանաչվել Ալբերտ Ղանիեյանցի և Հասմիկ Նիկողոսյանի

ամուսնության գրանցումը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.11.2012թ. որոշմամբ Անյա Պողոսի Դանիելյանցի վերաքննիչ բողոքը բավարարվել է: ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 10.11.2010թ. թիվ ԿԴ1/0553/02/10 քաղաքացիական գործով կայացրած վճիռը բեկանվել է և գործն ուղարկել նույն դատարան նոր քննության:

2. Կիրառելի իրավունքը

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 20-րդ հոդվածի 4-րդ կետը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303, 274 հոդվածները:

3. Իրավական խնդիր

Արդյո՞ք առկա իրավահարաբերության նկատմամբ կիրառելի է վերը նշված իրավական նորմի պահանջը:

4. Վերլուծություն

Դատարանը փաստում է, որ հայցվոր Անյա Դանիելյանցը և նրա որդի՝ Ալբերտ Դանիելյանցը՝ որպես Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված, ՀՀ Կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների նախկին վարչության կողմից հաշվառվել են որպես փախստական և ՀՀ Կառավարության 2004թ. մայիսի 20-ի “1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրի մասին” N 747-Ն որոշմամբ հաստատված ծրագրով ընդգրկվել են բնակարանի գնման վկայագրերի տրամադրման հերթացուցակում:

23.02.1999թ. հայցվորի որդի Ալբերտ Առնոլդի Դանիելյանցը ամուսնացել է պատասխանող Հասմիկ Նիկողոսյանի հետ: 08.11.2007թ. ՀՀ Կառավարության, ի դեմս Կոտայքի մարզպետի և կողմերի միջև կնքվել է ՀՀ 2007 թվականի Պետբյուջեով “բնակարանային ապահովում բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով” ծախսային ծրագրով նախատեսված հատկացումների հաշվին անհատույց պետական ֆինանսական աջակցության տրամադրման մասին պայմանագիր (այսուհետ պայմանագիր), որով հայցվորին, որդուն և նրա կնոջը, որպես աջակցություն ստացողի, անհատույց տրամադրվել է բնակարանի գնման վկայագիր, որն անվանական փաստաթուղթ է և որով հավաստվում է վկայագիր ստացած անձի կողմից ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից պատրաստի բնակարանի /բնակելի տան/ ձեռքբերման համար անհատույց պետական ֆինանսական աջակցություն ստանալու իրավունքը:

13.11.2007թ. Անյա Պողոսի Դանիելյանցին տրվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության բնակարանի գնման վկայակագիր, ինչպես նաև բնակարանի գնման վկայագիր կտրոն՝ 8.250.000 ՀՀ դրամի վկայակագրի միջոցով երկու սենյականոց բնակարանի /բնակելի տան/ ձեռք բերման համար:

13.11.2007թ. Անյա Պողոսի Դանիելյանցին տրված ՀՀ քաղաքաշինության նախարարության բնակարանի գնման վկայակագրի հիման վրա՝ 12.12.2007թ. կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր՝ մի կողմից Հովհաննես Սուրենի Սարտիրոսյանի որպես վաճառողի, մյուս կողմից որպես գնորդ՝ Անյա Դանիելյանցի, Ալբերտ Դանիելյանցի և Հասմիկ Նիկողոսյանի միջև, որով վերջիններս 8.250.000 ՀՀ դրամով սեփականության իրավունքով ձեռք են բերել Կոտայքի մարզի Արվյան քաղաքի Չափիչի 3-րդ հանրակացարանի թիվ 52 հասցեյուն գտնվող երկու սենյականոց բնակարանը:

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 17.07.2012թ. վճռով Ալբերտ Դանիելյանցի և Հասմիկ Նիկողոսյանի ամուսնությունը զրանցման պահից ճանաչվել է անվավեր՝ հիմք

ընդունելով այն հանգամանքը, որ Ալբերտ Դանիելյանցի և Հասմիկ Նիկողոսյանի ամուսնությունը գրանցելու պահին 23.02.1999թ. վերջին գրանցված ամուսնության մեջ է գտնվել մեկ այլ անձի՝ Վարդան Հարությունյանի հետ:

Համաձայն ընտանեկան օրենսգրքի 20-րդ հոդվածի 4-րդ կետի՝ ամուսնությունն անվավեր է ճանաչվում դրա պետական գրանցման պահից:

Տվյալ պարագայում Հասմիկ Նիկողոսյանը Անյա Դանիելյանցի ընտանիքի անդամ չէր կարող լինել, քանի որ նրա և Ալբերտ Դանիելյանցի ամուսնությունը կնքման պահից ամուսնությունն անվավեր էր, հետևաբար նրա ամուսնության գրանցումը Ալբերտ Դանիելյանցի հետ ամուսնա ընտանեկան հարաբերություններից բխող հետևանքներ չէր կարող առաջացնել, նա չէր կարող հանդես գալ որպես շահառու և բնակարանի գնման վկայագրի միջոցով անհատույց ֆինանսական աջակցություն ստացող, հետևաբար 12.12.2007թ. կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով Կոտայքի մարզի Արովյան քաղաքի Չափիչի 3-րդ հանրակացարանի թիվ 52 հասցեյում գտնվող երկու սենյականոց բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռք բերման սուբյեկտ չէր կարող հանդիսանալ:

Համաձայն ՀՀ կառավարության 24.02.2005թ. թիվ 309-Ն որոշմամբ հաստատված “ՀՀ տարեկան պետ. բյուջեներով՝ բնակարանային ապահովման ծախսային ծրագրով նախատեսված հատկացումների հաշվին բնակարանների գնման վկայագրերի տրամադրման” կարգի 9-րդ կետի՝ վկայագրում նշվող աջակցության չափը որոշվում է սույն կետով սահմանված նորմաներով աջակցություն ստանալու իրավունք ունեցող անձի ընտանիքին (անձանց թվով) հասանելիք բնակարանի (սենյակների թվով) տվյալ բնակավայրում 2005թ. մայիսի 1-ի դրությամբ ձևավորված շուկայական միջինացված արժեքից:

Վկայագիր ստանալուն հավակնող անձի ընտանիքին հասանելիք բնակարանի սենյակների թիվը համաձայն ՀՀ կառավարության 24.02.2005թ. թիվ 309-Ն որոշմամբ հաստատված “ՀՀ տարեկան պետ. բյուջեներով՝ բնակարանային ապահովման ծախսային ծրագրով նախատեսված հատկացումների հաշվին բնակարանների գնման վկայագրերի տրամադրման” կարգի 3-րդ կետի “ա” ենթակետում նշված անձանց համար որոշվում է՝ միևնույն սեռի կամ տարբեր սեռի երկու անձից բաղկացած ընտանիքին, եթե երեխան ինը տարեկանից փոքր է, ինչպես նաև ամուսիններին՝ 1-սենյականոց բնակարան, ինը տարեկանից մեծ տարբեր սեռի երկու անձից (բացի ամուսիններից) և երեք անձից բաղկացած ընտանիքին՝ 2-սենյականոց բնակարան:

Դատարանը փաստում է, որ վերը վկայակոչած որոշման համաձայն Անյա Դանիելյանցի ընտանիքին՝ իրեն և որդուն՝ Ալբերտ Դանիելյանցին՝ որպես ինը տարեկանից մեծ տարբեր սեռի երկու անձինք պետք է տրամադրվեր երկու սենյականոց բնակարան, որը և հատկացվել է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303 հոդվածի համաձայն՝ գործարքն անվավեր է սույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք):

2. Վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելու պահանջը կարող են ներկայացնել սույն օրենսգրքում նշված անձինք:

3. Առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման մասին պահանջ կարող է ներկայացնել ցանկացած շահագրգիռ անձ: Դատարանն իրավունք ունի այդպիսի հետևանքներ կիրառել սեփական նախաձեռնությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274 հոդվածի համաձայն սեփականատերն իրավունք ունի իր գույքը հետ պահանջել ուրիշի ապօրինի տիրապետումից:

Դատարանը գտնում է, որ վերը վկայակոչված իրավական նորմերի ուժով հայրը ենթակա է բավարարման:

	<p>Անդրադառնալով դատական ծախսերի հարցին, դատարանը գտնում է, որ Հասմիկ Միկոդոսյանից հոգուտ Հայաստանի Հանրապետության պետք է բռնագանձել 10.000 ՀՀ դրամ, որպես դատարանի դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար սահմանափակ պետական տուրք:</p> <p>Դեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130 և 132 հոդվածներով դատարանը, Վ Ճ Ռ Ե Ց</p> <p>Անյա Պողոսի Դանիելյանցի հայցը բավարարել՝ մասնակիորեն՝ Հասմիկ Միկոդոսյանի մասով, անվավեր ճանաչել ՀՀ 2007 թվականի պետական բյուջեով «բնակարանային ապահովում բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով» ծախսային ծրագրով նախատեսված հատկացումների հաշվին անհատույց պետական ֆինանսական աջակցության տրամադրման մասին պայմանագիրը, և դրա հիման վրա 12.12.2007թվականին Աբովյան քաղաքի «Չափիչի» 3-րդ հանրակացարանի թիվ 52 բնակարանի վերաբերյալ կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, դրա հիման վրա ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Աբովյանի տարածքային ստորաբաժանման կողմից 14.01.2008թ. պետական գրանցման միասնական 4-53 մատյանի թիվ 121 համարի տակ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, համապատասխանաբար փոփոխություններ կատարել վերը նշված հասցեի վերաբերյալ տրված թիվ 2507863 սեփականության իրավունքի գրանցման վկայականում՝ որպես համասեփականատերեր գրանցել Անյա Պողոսի Դանիելյանցին և Ալբերտ Դանիելյանցին: Պատասխանող Հասմիկ Միկոդոսյանին վտարել Աբովյան քաղաքի «Չափիչի» 3-րդ հանրակացարանի թիվ 52 բնակարանից:</p> <p>Հասմիկ Միկոդոսյանից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 10.000 ՀՀ դրամ, որպես պետական տուրք:</p> <p>Վճիռը կանովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:</p> <p>Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:</p> <p>ԴԱՏԱՎՈՐ՝ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ</p>
<p>Դատական ակտի ամսաթիվը:</p>	<p>14-03-2013</p>
<p>Ակտով հոգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ. տուրքի չափը (ՀՀ դրամ):</p>	<p>10000</p>
<p>Այլ նշումներ:</p>	
<p>Ամսաթիվ:</p>	<p>15-04-2013</p>
<p>Այլ նշումներ:</p>	
<p>Տրվել է կատարողական թերթ:</p>	<p>18-04-2013</p>
<p>Հօգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ. տուրքի չափը (ՀՀ դրամ):</p>	<p>10000</p>
<p>Կատարողական թերթերի քանակ:</p>	
<p>Այլ նշումներ:</p>	
<p>Ամսաթիվ:</p>	<p>17-04-2013</p>
<p>Ներկայացվել է դիմում</p>	<p>Կատարողական թերթի տրամադրման վերաբերյալ</p>

միջնորդություն:	
Ում կողմից է ներկայացվել:	
Նշանակվել է դատական նիստ:	
Միջնորդության ընթացքը:	Բավարարվել է
Որոշումը:	
Դատավոր	
Դատարանի անվանում:	Աբովյան
Դատավորի անուն:	
Այլ նշումներ:	
Վերամակագրման ամսաթիվ:	
Դատավոր	
Դատարանի անվանում:	Աբովյան
Դատավորի անուն:	
Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:	23-04-2013
Էջերի քանակը:	1-ին հատոր` 92, 2-րդ` 233
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	25-04-2013
Էջերի քանակը:	1-ին հատոր` 92, 2-րդ հատոր` 233 թերթ
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	
Դատական Գործ N: ԿԴ1/0553/02/10	
Ամսաթիվ:	10-04-2012
Բողոք բերող անձը	
Անուն:	Անյա Ալբերտ Դանիելյանցներ
Հասցե:	ՀՀ, Կոտայքի մարզ
Ներկայացուցիչ	
Անուն	Աստղիկ
Ազգանուն	Ղազարյան
Հասցե	ք.Աբովյան
Ում կողմից է բերվել բողոքը:	Հայցվորի ներկայացուցիչ
Պետական տուրք:	0
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Պատասխան բերող անձը	
Անուն	
Ազգանուն	

Հասցե	
Բողոքարկվող դատական ակտը:	ԿԴ1/0553/02/10
Գործի համարը:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	20-04-2012
Վիճակագրական տողի համարը:	2.4
Գործի համարը:	ԿԴ1/0553/02/10
Գործը բաղկացած է (հատուոր / էջերի քանակ):	92թերթից
Գործը ստացվել է:	Կոտայքի մարզ
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	23-04-2012
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաքննիչ
Դատավորի անուն:	Դանիել Վարդանի Խաչատրյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաքննիչ
Դատավորի անուն:	Ստեփան Կարոյի Միքայելյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաքննիչ
Դատավորի անուն:	Նախշուն Գևորգի Տավարացյան
Այլ նշումներ:	
Երբ:	27-04-2012
Որոշումը ուղարկվել է կողմերին:	27-04-2012
Ուղարկվել է հուշաթերթիկ/որոշումը:	27-04-2012
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	06-06-2012
Ծանուցագիրը ուղարկվել է:	
Ժամ:	12:05
Նիստերի դահլիճի համարը:	320
Այլ:	
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Ամսաթիվ:	06-06-2012
Հոդված	
Հոդված	215 Կետ 1
Որոշում:	Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Վ Ե Ր Ա Ք Ն Ն Ի Չ Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի Ա Կ Ա Ն Դ Ա Տ Ա Ր Ա Ն

ՀՀ, Կոտայքի մարզի Քաղաքացիական գործ N ԿԴ1/0553/02/10 ընդհանուր իրավասության դատարանի վճիռ Նախագահող դատավոր՝ Ս.Թորոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔԸ ՎԵՐԱԴԱՐՉՆԵԼՈՒ և ՎԵՐԱՔՆՆԻՉ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը/այսուհետ՝ Վերաքննիչ դատարան/ հետևյալ կազմով՝

նախագահող դատավոր Դ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ
Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ

2012 թվականի հունիսի 06-ին, քննարկելով քաղաքացիական գործով ըստ հայցի՝ Անյա Պողոսի Դանիելյանցի ընդդեմ Հասմիկ Սարիբեկի Նիկողոսյանի, երրորդ անձինք՝ Ալբերտ Առնոլդի Դանիելյանցի, ՀՀ Կոտայքի մարզպետարանի, ՀՀ Տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության՝ պայմանագրերը մասնակի անվավեր ճանաչելու, անշարժ գույքի կադաստրի գրանցամատյանում կատարված գրառումը և դրա հիման վրա տրված սեփականության իրավունքի գրանցման վկայականը մասնակի փոփոխելու, բնակարանից վտարելու պահանջների մասին, ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի /այսուհետ՝ նաև Դատարան/ 10.11.2010 թվականի թիվ ԿԴ1/0553/02/10 վճիռը նոր երևան եկած հանգամանքով վերանայելու մասին Անյա և Ալբերտ Դանիելյանցների կողմից բերված վերաքննիչ բողոքը վերադարձնելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Անյա Դանիելյանցը 25.06.2010 թվականին հայցադիմում է ներկայացրել Դատարան պահանջել է՝ մասնակիորեն՝ Հասմիկ Նիկողոսյանի մասով, անվավեր ճանաչել ՀՀ 2007 թվականի Պետբյուջեով «բնակարանային ապահովում բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով» ծախսային ծրագրով նախատեսված հատկացումների հաշվին անհատույց պետական ֆինանսական աջակցության տրամադրման մասին պայմանագիրը, 12.12.2007 թվականին Արմյան քաղաքի «Չափիչի» 3-րդ հանրակացարանի թիվ 52 բնակարանի վեաբեյալ կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, դրա հիման վրա ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ «Արմյան» տարածքային ստորաբաժանման կողմից 14.01.2008 թվականին պետական գրանցման միասնական 4-53 մատյանի թիվ 121 համարի տակ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, համապատասխանաբար փոփոխություններ կատարել վերը նշված հասցեի վերաբեյալ տրված թիվ 2507863 սեփականության իրավունքի վկայականում՝ որպես համասեփականատերեր նշելով իրեն և որդուն՝ Ալբերտ Դանիելյանցին, իսկ պատասխանող՝ Հասմիկ Նիկողոսյանին վտարել Արմյան քաղաքի «Չափիչի» 3-րդ հանրակացարանի թիվ 52 բնակարանից:

Դատարանի 10.11.2010 թվականի վճռով հայցապահանջն ամբողջությամբ մերժվել է: Վճիռը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

Վերը նշված վճիռը նոր երևան եկած հանգամանքով վերանայելու մասին վերաքննիչ բողոք են բերել Անյա և Ալբերտ Դանիելյանցները: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.04.2012 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ և դատական նիստ է նշանակվել 2012 թվականի հունիսի 06-ին, ժամը 12-05-ին:

Բողոք բերած անձինք դիմում են ներկայացրել, որով խնդրել են հետ վերադարձնել իրենց կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը:
 Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 215 հոդվածի 1-ին կետի վերաքննիչ բողոք բերած անձն իրավունք ունի հետ վերցնելու բողոքը, մինչև վերաքննիչ դատարանը սկսի գործի քննությունը:

Դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքն ենթակա է վերադարձման, իսկ վերաքննիչ վարույթը՝ կարճման, քանի որ վճիռն այլ անձանց կողմից չի բողոքարկվել, իսկ բողոք բերած անձանց կողմից վերաքննիչ բողոքը հետ վերցնելու մասին դիմում է ներկայացվել մինչև վերաքննիչ դատարանի կողմից գործի քննության սկսելը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144 և 215 հոդվածներով վերաքննիչ դատարանը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Վերադարձնել քաղաքացիական գործով ըստ հայցի՝ Անյա Պողոսի Դանիելյանցի ընդդեմ Հասմիկ Սարիբեկի Նիկողոսյանի, երրորդ անձինք՝ Ալբերտ Առնոլդի Դանիելյանցի, ՀՀ Կոտայքի մարզպետարանի, ՀՀ Տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության՝ պայմանագրերը մասնակի անվավեր ճանաչելու, անշարժ գույքի կադաստրի գրանցամատյանում կատարված գրառումը և դրա հիման վրա տրված սեփականության իրավունքի գրանցման վկայականը մասնակի փոփոխելու, բնակարանից վտարելու պահանջների մասին, ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 10.11.2010 թվականի թիվ ԿԴ1/0553/02/10 վճիռը նոր երևան եկած հանգամանքով վերանայելու մասին Անյա և Ալբերտ Դանիելյանցների կողմից բերված վերաքննիչ բողոքը:

Վերաքննիչ վարույթը կարճել:
 Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան այն ստանալու օրվանից տասնհինգօրյա ժամկետում

ՆԱԽԱԳԱՀՐԴ ԴԱՏԱԿՈՐ ԴԱՏԱԿՈՐ ԴԱՏԱԿՈՐ
 Դ. ԽԱՉԱՏՐՅԱՆ Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Ամսաթիվ:	19-06-2012
Էջերի քանակը:	1-92, 2-84
Գործին կից նյութերը:	
Գործն ուղարկվել է:	14-07-2012
Ուր:	Կոտայքի մարզ
Գրության համարը:	
Այլ նշումներ:	

Ամսաթիվ:	24-09-2012
Բողոք բերող անձը	
Անուն	Անյա
Ազգանուն	Դանիելյանց
Հասցե	ք.Աբովյան,Չափիչի 3-րդ հանրակաց.,բն.52
Ներկայացուցիչ	
Անուն	Աստղիկ
Ազգանուն	Ղազարյան

Հասցե	ք.Աբովյան
Ուն կողմից է բերվել բողոքը:	Հայցվորի ներկայացուցիչ
Պետական տուրք:	0
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Պատասխան բերող անձը	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Բողոքարկվող դատական ակտը:	ԿԴ1/0553/02/10
Գործի համարը:	
Ամսաթիվ:	29-09-2012
Վիճակագրական տողի համարը:	2.4
Գործի համարը:	ԿԴ1/0553/02/10
Գործը բաղկացած է (հատոր / էջերի քանակ):	2հ.,1-92,2-87
Գործը ստացվել է:	Կոտայքի մարզ
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	01-10-2012
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաքննիչ
Դատավորի անուն:	Տարոն Մանվելի Նազարյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաքննիչ
Դատավորի անուն:	Կարինե Բենիամինի Հակոբյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաքննիչ
Դատավորի անուն:	Տիգրան Սահակյան
Այլ նշումներ:	
Երբ:	04-10-2012
Որոշումը ուղարկվել է կողմերին:	08-10-2012
Ուղարկվել է հուշաթերթիկ/որոշումը:	08-10-2012
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	31-10-2012
Ծանուցագիրը ուղարկվել է:	08-10-2012
Ժամ:	12:20
Նիստերի դահլիճի համարը:	104
Այլ:	
Նիստը:	Կայացվել է

Պատճառը:	
Ամսաթիվ:	07-11-2012
Ծանուցագիրը ուղարկվել է:	
Ժամ:	12:59
Նիստերի դահլիճի համարը:	104
Այլ:	
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Ամսաթիվ:	07-11-2012
Դատական ակտը բեկանվել է ամբողջությամբ:	Գործն ուղարկվել է ստորադաս դատարան նոր քննության
Դատական ակտը բեկանվել է մասնակի:	
Այլ նշումներ:	
Դատական ակտ:	<p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ</p> <p>ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր Քաղաքացիական գործ թիվ ԿԴ1/0553/02/10 իրավասության դատարանի վճիռ Նախագահող դատավոր Ս. Թորոսյան</p> <p>Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ</p> <p>Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան),</p> <p>նախագահությամբ՝ Տ. ՆԱԶԱՐՅԱՆԻ մասնակցությամբ՝ դատավորներ Կ. ՀԱԿՈԲՅԱՆԻ Տ. ՍԱՀԱԿՅԱՆԻ</p> <p>2012 թվականի նոյեմբերի 07-ին</p> <p>դռնբաց դատական նիստում, քննելով Անյա Պողոսի Դանիելյանցի բողոքը ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 10.11.2010 թվականի վճիռը նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայելու պահանջի մասին,</p> <p>Պ Ա Ր Զ Ե Ց</p> <p>1. Գործի դատավարական նախապատմությունը. Անյա Պողոսի Դանիելյանցը հայց է ներկայացրել Դատարան ընդդեմ Հասմիկ Սարիբեկի Նիկողոսյանի, երրորդ անձինք՝ Ալբերտ Առնոլդի Դանիելյանցի, ՀՀ Կոտայքի մարզպետարանի, ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության՝ պայմանագրերը մասնակի անվավեր ճանաչելու, անշարժ գույքի կադաստրի գրանցամատյանում կատարված գրառումը և դրա հիման վրա տրված սեփականության իրավունքի գրանցման վկայականը մասնակի փոփոխելու, բնակարանից վտարելու պահանջների մասին: Դատարանի 10.11.2010 թվականի վճռով հայցը մերժվել է:</p>

Անյա Պողոսի Դանիելյանցը ներկայացրել է բողոք, որով խնդրել է նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայել վերոգրյալ վճիռը:

Վերաքննիչ դատարանի 04.10.2012 թվականի որոշմամբ հարուցվել է դատական ակտը նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայման վարույթ:

Բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Բողոքի հիմքերը, հիմնավորումները և բողոք բերած անձի պահանջը.

Բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոք բերած անձը վկայակոչել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածը.

Այս հիմքը բողոք բերած անձը հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 17.07.2012

թվականի վճռով անվավեր է ճանաչվել Ալբերտ Դանիելյանցի և Հասմիկ Նիկողոսյանի ամուսնությունը: Այսինքն՝ կնքման պահից վերջիններիս ամուսնությունն անվավեր է եղել և այն որևէ իրավական հետևանք չպետք է առաջացներ, այսինքն՝ Հասմիկ Նիկողոսյանը չպետք է որպես շահառու փախստական ընտանիքի անդամ դառնար գնված գույքի սեփականատեր: Արդյունքում այն հանգամանքը, որ ամուսնանալիս Հասմիկ Նիկողոսյանը գրանցված ամուսնության մեջ է գտնվել մեկ այլ անձի հետ՝ հայտնի չի եղել:

Բողոքաբերը նշել է, որ Հասմիկ Նիկողոսյանը իր ընտանիքի անդամ չէր կարող լինել, քանի որ վերջինիս և Ալբերտ Դանիելյանցի ամուսնությունը կնքման պահից անվավեր է եղել, իսկ առանց նրա էլ Անյա Դանիելյանցի ընտանիքին՝ իրեն և որդուն պետք է տրամադրվեր երկու սենյականոց բնակարան:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է նոր երևան եկած հանգամանքների հիմքով բեկանել Դատարանի 10.11.2010

թվականի թիվ ԿԴ1/0553/02/10 վճիռը և հայցը բավարարել:

Վերաքննիչ բողոքի քննության ընթացքում ի պատասխան նախագահող դատավորի հարցման՝ բողոքաբերի ներկայացուցիչը հստակեցրել է վերաքննիչ բողոքի պահանջը և խնդրել է Դատարանի վճիռը բեկանել և գործն ուղարկել նոր քննության:

3. Վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 10.11.2010 թվականի վճռով մերժվել է Անյա Պողոսի Դանիելյանցի հայցն ընդդեմ Հասմիկ Սարիբեկի Նիկողոսյանի, երրորդ անձինք՝ Ալբերտ Առնոլդի Դանիելյանցի, ՀՀ Կոտայքի մարզպետարանի, ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության՝ պայմանագրերը մասնակի անվավեր ճանաչելու, անշարժ գույքի կադաստրի գրանցամատյանում կատարված գրառումը և դրա հիման վրա տրված սեփականության իրավունքի գրանցման վկայականը մասնակի փոփոխելու, բնակարանից վտարելու պահանջների մասին:

2. ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 17.07.2012 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով անվավեր է ճանաչվել Ալբերտ Դանիելյանցի և Հասմիկ Նիկողոսյանի ամուսնության գրանցումը:

4. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վերաքննիչ բողոքը դրանում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում՝ Վերաքննիչ դատարանը եկավ հետևյալ եզրակացության.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նոր երևան եկած հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե բողոք ներկայացրած անձն ապացուցում է, որ այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, կամ այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան և այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն:

Մեկնաբանելով վերոնշյալ նորմը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի պահանջներին համապատասխան պարզ է դառնում, որ նոր երևան եկած հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար միայն որոշակի պայմանների առկայության դեպքում: Մասնավորապես

ա. ներկայացված հանգամանքները, որոնք կարող են որպես նոր երևան եկած հանգամանք հիմք հանդիսանալ դատական ակտի վերանայման համար, հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց,

բ. այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն:

Տվյալ դեպքում ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 17.07.2012 թվականի վճռով անվավեր է ճանաչվել Ալբերտ Դանիելյանցի և Հասմիկ Նիկողոսյանի ամուսնությունը: Արդյունքում մինչ 17.07.2012 թվականը, և հատկապես 10.11.2010 թվականի դրությամբ հայտնի չի եղել այն հանգամանքը, որ Ալբերտ Դանիելյանցի և Հասմիկ Նիկողոսյանի ամուսնությունն անվավեր է եղել գրանցման պահից: Իսկ նշված անձանց ամուսնությունը գրանցման պահից անվավեր լինելը էական նշանակություն ունի գործի լուծման համար այնքանով, որքանով որ տվյալ դեպքում Անյա Դանիելյանցի կողմից դատարան ներկայացված պահանջը վերաբերել է Հասմիկ Նիկողոսյանի մասով պայմանագրերը անվավեր ճանաչելուն, անշարժ գույքի կադաստրի գրանցամատյանում կատարված գրառումը մասնակի փոփոխելուն և Հասմիկ Նիկողոսյանին բնակարանից վտարելու պահանջներին: Այսպիսով՝ վերաքննիչ դատարանը գտնում է, որ սույն գործով առկա են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 10.11.2010 թվականի վճիռը վերանայելու հիմքեր, ուստի բողոքարկվող վճիռը պետք է բեկանել և գործն ուղարկել նոր քննության: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ և 221-րդ հոդվածներով՝ վերաքննիչ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Անյա Պողոսի Դանիելյանցի վերաքննիչ բողոքը բավարարել:
2. ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 10.11.2010 թվականի թիվ ԿԴ1/0553/02/10 քաղաքացիական գործով կայացրած վճիռը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:
3. Դատական ծախսերի հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքում կայացվելիք դատական ակտով:

Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ Տ. ՆԱԶԱՐՅԱՆ ԴԱՏԱՎՈՐ
Կ. ՀԱԿՈՔՅԱՆ ԴԱՏԱՎՈՐ
Տ. ՍԱՀԱԿՅԱՆ

Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտել « » ----- 2012 թվականին:

Նախագահող դատավոր՝ Տ. ՆԱԶԱՐՅԱՆ

Դատական ակտի ամսաթիվը: 07-11-2012

Ակտով հօգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ. (<< դրամ): Դատական ծախսերի հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքում կայացվելիք դատական ակտով

Ամսաթիվ: 04-12-2012

Ամսաթիվ: 04-12-2012

Էջերի քանակ: 2հ.,1-92,2-167

Գործին կից նյութերը:

Գործն ուղարկվել է: 24-12-2012

Ուր: Կոտայքի մարզ

Գրության համարը:

Այլ նշումներ:

Դատական Գործ N: ԿԴ1/0553/02/10

Ամսաթիվ: 19-07-2012

Այլ նշումներ:

Ամսաթիվ: 19-07-2012

Ուր: Աբովյան

Այլ նշումներ:

Ամսաթիվ: 27-12-2012

Գործը ստացվել է:	Գործը ստացվել է բեկանումից հետո նոր քննության համար
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	27-12-2012
Ուր:	Աբովյան
Այլ նշումներ:	